

Եյսը տեսան, բայց Պօլսոս առաքելց  
ուղեկցաց պէս՝ ձայները չլսեցին կամ  
չհասկացան. սակայն կարծէին որ Քրիս-  
տոս կ'երևէր և կ'ըսէր իր ընտրելոյն.  
«Մի դանդաղիր, զի ես ընդ քեզ եմ,  
» և անյաղթելի առնեմ զքո բանդ »:  
— Նոյն իսկ Յոհաննավանուց մէջ այս-  
պիսի այցելութիւն մ'ունեցաւ վահան.  
և ելնելուն ատեն՝ Հայրն Յոհան այլ Սո-  
զոմնի պէս առւաւ իրեն պէտք եղած  
զգեստ, թոշակ և ծի: — Նոյն ընդունե-  
լութիւնը գտաւ վահան նաև ուրիշ  
վանորէից մէջ, մանաւանդ յիշատակե-  
լոց ամենէն ետքին մէջ, որ է Երաշխա-  
ռոր (Հիմա Սրանչելագործ) ըսուած  
վանքն յԱրծկէ, վանայ ծովուն արե-  
մտեան հիւմիսային ծայրը, Սիփան  
(Մասեաց) լեռան ստորոտը. որոյ Հայրն  
կամ առաջնորդն էր Արտաւազդ, բա-  
րեսէր հիւրասէր անձ մը, որոյ Համար  
և Արքահամ կոչուէր. որ և իմանալով  
թէ վահան է եկողն, բոլոր եղբայրնե-  
րով գիմացն ելաւ ընդունեցաւ, և իրեք  
օր պահեց պատուեց սփոփեց զնա. լլ-  
սեց մանրամասնարար անոր դիպուած-  
ները և դիտաւորութիւնը. ինքն այլ  
քաջալերեց, և թոշակը նորոգելով, ա-  
ռաջնորդ եղբայր մ'այլ տուաւ, որ ին-  
չուան ուր որ ուզէ հետը տանի. արձը-  
կեց զնա մեծ սիրով, և մեծ այլ յու-  
սով՝ քիչ ատենէն Քրիստոսի եկեղեց-  
ւոյն փառաւոր յաղթող վկայ մը ճանչ-  
նալու և ճանչցընելու զնա, ինչպէս որ  
ըրաւ այլ:

Հ. Դ. Մ. ԱԼԻՇԱ

Կր շարունակուի:

Ճշմարտախօսութիւն.

Ճանապարհորդ ոմն ՚ի պատմելն  
զանցս ճանապարհորդութեան իւրոյ,  
ասէ, թէ ծանեայ զայր ոմն ՚ի հասա-  
կի ամաց 110, որ երդնոյր թէ չէ իւր  
սուեալ բնաւ:

Եւ եղև ՚ի միում աւուրց կենաց իւ-

րոց՝ ել սա յարքունիս թագաւորին,  
ուր կոչեցեալն էր, զի կամէր խօսել  
ընդ նմա թագաւորն. և ՚ի հարցանել  
զնա թագաւորին, թէ ո՞լեալ իցէ հայր  
քո: — Ծերունին, առ ՚ի չարկանելոյ  
զանձն ՚ի վտանդ ստախօսութեան, այս-  
պիսի ետ պատասխանի. — Տէր իմ  
արքայ, ես չգիտեմ զայր հաւաստեաւ.  
բայց թէ արժան իցէ ինձ հաւատալ մօր  
իմում, յիշեմ՝ զի ասէր նա ցիս, թէ  
Այս ոմն անուն եղեալ իցէ այր իւր:

—————  
Փիլիսոփիայ և ոմն նաւաստի.

Դաւաստի ոմն պատրաստէր նաւել  
՚ի Հնդիկս. Եհարց ցնա փիլիսոփիայ ոմն .  
Ո՞ւր մեռաւ հայր քո: Ետ պատասխա-  
նի նաւաստին՝ ՚ի նաւաբեկութեան: Եւ  
հաւ քո: — Յերթան յորս ձկանց, յա-  
րեաւ մրրիկ սաստիկ, և ընկղմեաց զնա:  
Իսկ նախահաւ քո ուրանօր: — Եւ  
նա կորեաւ, ասէ, ՚ի նաւի ուրեք խոր-  
տակելոյ ՚ի ժայռու:

Ապա որպէս իշխես, կրկնեաց փի-  
լիսոփիայն, մտանել ՚ի ծով, ուր կորեան  
ամենայն քո նախնիք :

Պատասխանի ետ նաւաստին. Տէր,  
ասա ինձ, ո՞ւր մեռաւ հայր քո. — պա-  
տասխանի ետ փիլիսոփիայն. յանկողնի  
իւրում:

Եւ նախնիք քո: — Ամենեքին մե-  
ռան, ասէ, հանգստեամբ յանկողնի իւ-  
րեանց: Յաւել յայնժամ նաւաստին,  
բարձրաձայն ծիծաղելով: Որպէս վստա-  
կիս ուրեմն Տէր իմ մտանել յանկողին  
յամենայն երեկոյս, ուրանօր մեռան  
ամենայն նախնիք քո:

—————